



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԵՑ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ԱՆՆՏՐԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ

Բարեսիրական հաստատություններ, տարեցներու, մանուկներու ինչպէս տրամադրող հիմնարկներ միշտ ալ եղած են Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հետաքրքրութեանց ու հոգածութեան առարկաները: Հովուապետական իր ներկայ այցելութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը յատուկ ժամանակ տրամադրած է նման կեդրոններ այցելութեանց: Երկուշաբթի, 17 Հոկտեմբերի կեսօրին, այս հոգածութիւնը արտայայտութիւն գտաւ «Արարատ» Տան Միշըն Հիլզի հաստատութիւնը այցելութեամբ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի, հոգեւոր հայրերու եւ ժողովականութեան անդամներու ընկերակցութեամբ, Վեհափառ Հայրապետը «Արարատ» Տուն հասաւ կեսօրին եւ դիմաւորուեցաւ հաստատութեան պատասխանատուներուն ու անձնակազմի անդամներուն կողմէ:

Հայրապետական շքախումբը առաջին հերթին այցելեց հիւանդանոցի բաժինը, որուն սրահին մէջ հաւաքուած տարեցներուն ուղղեց խրախուսական խօսքեր ու բաժնեց յուշանուէրներ: Այնուհետեւ, խումբը անցաւ տարեցներու պատասպարանի բաժինը, ուր Վեհափառ Հայրապետը աղօթքով հանդիպեցաւ բնակիչներուն հետ, բարձր գնահատեց անձնակազմն ու ծառայողները:

Հայրապետն ու ընտրակիցները անցան հաստատութեան մատուռը, ուր տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն: Ապա, Վեհափառը այցելեց «Էսկիճեան» թանգարանը, աչքէ անցուց հոն գետեղուած թանկարժէք իրերը եւ յուշանուէր մը յանձնեց պատասխանատուներուն:

«Արարատ» Տան պատասխանատուներն ու անձնակազմը Վեհափառն ու շքախումբը հիւրընկալեցին ճաշով: Ողջոյնի ու երախտագիտութեան խօսքեր արտասանեցին հոգաբարձութեան անդամներէն Տիար Ժոզէֆ Կիտանեան եւ ատենապետ Նազարէթ Աշճեան: Սրտի խօսք ատասանեց Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Վահէ Եագուպեան, որ անդրադարձաւ Վեհափառին հովուապետական այցելութեան սկսումէն ասդին արձանագրուած հանգրուաններուն, ընդգծելով, որ Վեհափառը կը մարմնաւորէ մէկ հայրենիք, մէկ հայութիւն ու բոլորս նոյն Աստուծոյ զաւակները նկատելու սկզբունքները:

Սրտի խօսք արտասանեց նաեւ Առաջնորդ Սրբազանը, որ հաստատութեան ծառայողները գնահատելէ ետք, յիշեցուց, որ Ազգ. Առաջնորդարանը տարիներէ ի վեր սերտ գործակցութիւն կը մշակէ այս հաստատութեան հետ, ուր ամիսը անգամ մը հոգեւոր հայրեր Ս. Պատարագ կը մատուցանեն ու եկեղեցական արարողութիւններ կը կատարեն պատսպարեալներուն համար: Ան հրաւիրեց Վեհափառ Հայրապետը՝ ուղղելու իր պատգամը:

Վեհափառ Հայրապետը գնահատեց այս հաստատութեան ծառայութիւնները, իբրեւ որակ թէ մօտեցում: «Ինչպէս որ Արարատ լեռը կը պատկանի համայն հայութեան, անոր անունը կրող այս հաստատութիւնն ալ մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն խնամք կը տրամադրէ առանց համայնքային, գաղափարական կամ այլ նկատառումներու, նուիրեալ ծառայութիւն կը տրամադրէ անխտիր բոլորին», ըսաւ Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով հոգաբարձական խորհուրդը, բարերարները եւ բոլոր անոնք, որոնք զօրավիգ են մարդասիրական այս հաստատութեան գործին: Ան մաղթեց, որ այս հաստատութիւնը տիպար օրինակ ծառայէ մեր բոլոր հիմնարկներուն: Նորին Ս. Օծութիւնը հաստատութեան անունին մէջ առանձնացուց Տուն գաղափարը, գնահատեց սքանչելի տուն մը ըլլալու անոր իրավիճակը եւ շէշտեց, որ անոր յարկը վայելող տարեցները լուսանցքային դիրքի վրայ չեն նկատուի, որովհետեւ սերունդներու պատրաստութեան մէջ անոնք ունեցած են հիմնական դեր:

## **HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS ARARAT HOME**

On Monday, October 17, 2011, His Holiness Catholicos Aram I visited Ararat Home in Mission Hills where he blessed the administration and blessed, conducted a prayer service at the Chapel, and visited the Museum.

His Holiness, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Clergy and Councils members, first visited the skilled-nursing facility where he led a prayer service and blessed the patients. Next they headed to the assisted-living facility where His Holiness led the Blessing of the Home prayer service and blessed the patients. The Pontiff reflected on the words Ararat Home, saying it had special meaning for Armenians. Ararat is the symbol of Armenians, Ararat is the symbol of our identity, of our unity, stated His Holiness, and said the word "home" also symbolizes family. "Home brings together the same values, the same traditions. This is not an old people's home. In this house, the spiritual and medical come together, and I'm very much touched by this home". His Holiness presented the residents with gifts of crosses, then headed to the Sheen Memorial Chapel for a prayer service, after which he toured the Eskijian Museum.

His Holiness and entourage were then hosted to a luncheon by the administration. Welcoming remarks were delivered by Ararat Home Board Chair Mr. Nazar Ashjian, member Mr. Joseph Kanimian, and Central Executive member Mr. Vahe Yacoubian.

The Prelate commended the administration for their devoted service, and noted that the Prelacy and Ararat Home have had a close relationship for many years and that Prelacy Clergy members visit the home on a monthly basis to celebrate Divine Liturgy and offer prayers. He then invited His Holiness to deliver his message.

His Holiness commended the administration for their care and nurturing of the elderly and reflecting on the name of the home, said that just as Ararat mountain belongs to all Armenians, this home too, which bears its name, serves all Armenians. His Holiness once again commended the Board and all the sponsors who support the valuable mission of Ararat Home, and expressed his wish that this institution be an ideal example to all community organizations.